

Բանալի բառեր՝ արտաքին առևտուր, արտահանման և ներմուծման ապրանքային կառուցվածք, կլաստերային վերլուծություն, գործունային վերլուծություն, տնտեսության գլոբալ մրցունակություն:

ՀՏԴ 339:338(475.25)

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության թեմա՝
Մրցակցային առավելությունները և ՀՀ-ի՝ միջազգային շուկա դուրս գալու հեռանկարները

Արթուր ՍԱՐԳՍՅԱՆ


Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի տնտեսագիտության տեսության և անցումային տնտեսությունում խնդիրների ամբիոնի հայցորդ

Գիտական ղեկավար՝
Թորոս ԹՈՐՈՍՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

1999-2016թթ. ժամանակահատվածում ՀՀ արտաքին առևտրի շրջանառությունը բացարձակ մեծությամբ աճել է շուրջ 5 անգամ՝ 1.1 մլրդ ԱՄՆ դոլլարից հասնելով 5.0 մլրդ ԱՄՆ դոլլարի (տես՝ գծապատկեր 1):

Դիտարկվող ժամանակահատվածում արտահանման միջին տարեկան աճի տեմպը կազմել է 14.4%, ներմուծմանը՝ 10.9%: Եվ չնայած ներմուծման համեմատությամբ արտահանման արձանագրած առաջանցիկ աճին, ՀՀ արտաքին ապրանքաշրջանառության բացասական հաշվեկշիռը շարունակում է զգալի մնալ, որը 2016թ. կազմել է շուրջ 1.5 մլրդ ԱՄՆ դոլլար: ԵՏՄ-ին ՀՀ անդամակցությամբ ստեղծված նոր իրողությունները շոշափելի ներգործություն ունեցան հատկապես՝ ներմուծման վրա (2016թ. 2014-ի համեմատ արձանագրվել է 25.0% անկում):

Գծապատկեր 1. Արտահանման և ներմուծման դինամիկան ՀՀ-ում՝ 1999-2016թթ.¹



Արտահանման կառուցվածքում գերակշռում է հանքահումքային արտադրանքը (26.4%), ընդ որում, հետձգնաժամային շրջանում այս ապրանքախմբի մասնաբաժինը ավելացել է 10 տոկոսային կետով: Արտահանման կառուցվածքում կարևոր դերակատարում ունի նաև պատրաստի սննդի արտադրանքը, որի արտահանումը 2016թ.կազմել է 418.2 մլն ԱՄՆ դոլլար (արտահանման 23.5%-ը), ինչը նախաձգնաժամային մակարդակը գերազանցում է ավելի քան երկու անգամ:

Ի հավելումս վերը նշվածի, խիստ ցածր է մեքենաշինության, սարքաշինության, քիմիական արդյունաբերության և այլ պատրաստի արտադրանքի արտահանման մակարդակը: Այսպես, «սարքեր և ապարատներ», «քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք», «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», «պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր» և «կոշիկեր, գլխարկներ, հովանոցներ» ապրանքային խմբերի գումարային մասնաբաժինը արտահանման կառուցվածքում 2016թ. չի գերազանցել 5%-ը, այն դեպքում, երբ օրինակ՝ 2007-ին կազմել է 10%, 2000-ին՝ 16%:

¹ ՀՀ ԱՎԾ, 1999-2016թթ. Հայաստանի վիճակագրական տարեգրքեր,

ՀՀ ապրանքային արտահանման համակենտրոնացման աստիճանը բավականին բարձր է: Այսպես, երեք խոշորագույն ապրանքախմբերի գումարային մասնաբաժինը արտահանման կառուցվածքում 2016թ. կազմել է 68.8%, իսկ հինգ խոշորագույնների պարագայում նույն ցուցանիշը կազմում է 86.4%: Ընդ որում, դիտարկվող ժամանակահատվածում արտահանման համակենտրոնացման աստիճանի նվազման նշանակալի միտումներ չեն արձանագրվել, բացառությամբ, թերևս, 2005-2007թթ. հատվածի, երբ թանկարժեք բարերի արտահանման ծավալների շուրջ 40% նվազման արդյունքում, այս ապրանքախմբի մասնաբաժինը արտահանման կառուցվածքում նկատելիորեն կրճատվեց, որով էլ պայմանավորված՝ արտահանման համակենտրոնացման մակարդակը որոշակի նվազում արձանագրեց: Սակայն սույն միտումը խիստ կարճաժամկետ բնույթ կրեց և հետագա տարիներին մի քանի հիմնական ճյուղերից ՀՀ ապրանքային արտահանման կախվածությունը շարունակեց ուժեղանալ:

Հատկանշական է, որ արտահանման ապրանքային կառուցվածքի համակենտրոնացման աստիճանի և ՀՆԱ մեծության միջև առկա է բավականին ուժեղ բացասական փոխկապվածություն (կորելացվածություն) (տես՝ աղյուսակ 1): Այսպես, չնայած երեք և հինգ խոշորագույն ապրանքախմբերի գծով արտահանման համակենտրոնացման գործակիցի ու ՀՆԱ մեծության միջև թույլ գծային կապ է նկատվում (գույգային կորելացիայի գործակիցը չի գերազանում 0.2-ը), սակայն Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսի և ՀՆԱ միջև առկա է բավականին ուժեղ բացասական կապ: Ըստ այդմ էլ կարելի է արձանագրել, որ արտահանման համակենտրոնացման խորացումը ՀՆԱ աճը զսպող գործոն է հանդիսանում: Նկարագրված կապը, սակայն, երեք և հինգ խոշորագույն ապրանքախմբերի պարագայում ակնառու կերպով չի դրսևորվում:

Աղյուսակ 1.

ՀՀ արտահանման ապրանքային կառուցվածքի համակենտրոնացման աստիճանի և ՀՆԱ փոխկապվածությունը (գծային կորելյացիայի գործակիցներ)²

Արտահանման համակենտրոնացման աստիճանի գնահատականը	ՀՆԱ-ի հետ գծային կորելյացիայի գործակիցը
Երեք խոշորագույնների մասնաբաժինը	-0,168
Հինգ խոշորագույնների մասնաբաժինը	0,047
Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը	-0,698

ՀՀ ապրանքային արտահանման դինամիկայում առկա խորքային, ոչ բացահայտ միտումների վերհանման նպատակով մեր կողմից իրականացվել է գործոնային վերլուծություն: Ընդհանրապես, գործոնային վերլուծության հիմնական նպատակը հետազոտվող ցուցանիշների չափողականության նվազեցումն ու ոչ բացահայտ փոփոխականների միջոցով առաջինների նկարագրությունն է³: Մեր կողմից գործոնային վերլուծությունն իրականացվել է ըստ արտահանման և ներմուծման հիմնական ապրանքային խմբերի, 1999-2016թթ. ընդգրկող ժամանակահատվածի համար, SPSS ծրագրային փաթեթի կիրառմամբ:

Ըստ հիմնական ապրանքային խմբերի արտահանման ծավալների (դրվարային արտահայտությամբ) իրականացված գործոնային վերլուծության արդյունքների, դիտարկվող ժամանակահատվածում դրսևորված արտահանման միտումները կարելի է բնութագրել երկու լատենտային փոփոխականների կամ ազդող գործոնների միջոցով, որոնք նկարագրում են էլակետային ցուցանիշների գումարային դիսպերսիայի 95%-ը: Այդ երկու փոփոխականների նկարագրությունը կարելի է կառուցել՝ ելնելով շրջված բաղադրիչների (գլխավոր բաղադրիչների եղանակով ստացված) մատրիցայի տարրերից (տես՝ աղյուսակ 2): Ըստ այդմ, ստացված արդյունքների վերլուծությունն ի ցույց է դնում ՀՀ արտահանման դինամիկայում երկու տարբեր միտումների առկայության փաստը: Մեկը բնութագրական է եղել 1999-2006թթ. ժամանակահատվածի համար (դիտարկվող մատրիցայի տարրերը, ըստ գործոն 1-ի, նշված ժամանակահատվածի համար առավելագույնն են): Մյուս միտումը բնորոշում է 2007-2016թթ. ժամանակահատվածը (պայմանականորեն այն կարող ենք անվանել գործոն 2):

Աղյուսակ 2.

Շրջված բաղադրիչների մատրիցը (գործոնային ծանրաբեռնվածությունները, ըստ 1999-2016թթ.⁴

Տարեթիվը	Գործոն 1	Գործոն 2
1999	0.927	0.310
2000	0.930	0.342
2001	0.903	0.387
2002	0.974	0.178
2003	0.968	0.222
2004	0.897	0.435
2005	0.754	0.581
2006	0.733	0.645
2007	0.459	0.829
2008	0.415	0.870
2009	0.353	0.915
2010	0.261	0.952
2011	0.305	0.940
2012	0.260	0.957
2013	0.269	0.937
2014	0.344	0.903
2015	0.285	0.880
2016	0.279	0.891

² Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

³ Многомерный статистический анализ в экономических задачах: компьютерное моделирование в SPSS, Учебное пособие, Под ред. И.В.Орловой. М.: Вузовский Учебник, 2009, 311 с.

⁴ Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

Վեր հանված երկու միտումների բովանդակությունը հստակեցնելու համար անհրաժեշտ է վերլուծել, թե փոփոխականներից կամ գործոններից յուրաքանչյուրն ի՞նչ արժեքներ է արձանագրել՝ ըստ ՀՀ արտահանման ապրանքային խմբերի: Այս տեղեկատվությունը, որը ևս գործոնային վերլուծության կարևոր արդյունք է հանդիսանում, ամփոփված է աղյուսակ 3-ում: Ըստ այդմ, գործոն 1-ում առավելագույն արժեքն արձանագրվել է «թանկարժեք ու կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» հոդվածի գծով, իսկ մնացած ապրանքախմբերի պարագայում գործոնի զնահատականներն անհամեմատ ցածր են: Ինչ վերաբերում է գործոն 2-ին, ապա առավելագույն զնահատականներն արձանագրվել են երեք հոդվածների մասով՝ ոչ թանկարժեք մետաղներ, պատրաստի սննդի և հանքահումքային արտադրանք: Սա կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ. 1999-2006թթ. ՀՀ արտահանման գծով գլխավոր բաղադրիչը, որով կարելի է նկարագրել դիտարկվող ժամանակահատվածում արտահանման փոփոխության միտումները, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի ու թանկարժեք մետաղների արտահանումն է եղել: 2007-ից տեղի է ունեցել արտահանման գծով փոփոխություն, որի հենասյունները երեքն են՝ ոչ թանկարժեք մետաղների, հանքահումքային արտադրանքի ու պատրաստի սննդի արտադրանքի արտահանումը:

Աղյուսակ 3.

Գործոնների կառուցվածքն ըստ արտահանման ապրանքային խմբերի⁵

Ապրանքային բաժինները	Գործոն 1	Գործոն 2
ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	0,246	2,683
հանքահումքային արտադրանք	-0,386	2,613
պատրաստի սննդի արտադրանք	-0,023	1,459
կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	-0,429	-0,184
բուսական ծագման արտադրանք	-0,399	-0,200
թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	4,150	-0,290
իրեր քարից, գիպսից, գեմենտից	-0,371	-0,316
մանածագործական իրեր	0,188	-0,376
վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	-0,240	-0,379
քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	-0,337	-0,384
սարքեր և ապարատներ	-0,161	-0,397
մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	0,226	-0,408
Պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր	-0,113	-0,428
կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	-0,353	-0,462
տարբեր արդյունաբերական ապրանքներ	-0,343	-0,473
կաշվի հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	-0,325	-0,477
կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ	-0,339	-0,492
թուղթ և թղթից իրեր	-0,319	-0,494
արվեստի ստեղծագործություններ	-0,341	-0,495
փայտ և փայտյա իրեր	-0,332	-0,500

ՀՀ արտահանման միտումների փոփոխման առավել խորքային վերլուծությունների իրականացման համար մեր կողմից կիրառվել է ևս կլաստերային վերլուծության գործիքակազմը⁶: Ըստ այդմ, արդեն նկարագրված վիճակագրական տվյալների հիման վրա, SPSS ծրագրային փաթեթի գործադրմամբ, կատարվել է աստիճանակարգային կլաստերացում: Ստացված արդյունքներից առավել ուշագրավ է դիտվում կլաստերացման ընթացակարգը նկարագրող դենդրոգրամի հետազոտությունը (տես՝ գծապատկեր 2): Այսպես, կլաստերացման սխեմայից ելնելով, կարելի է հանգել այն հետևության, որ ՀՀ արտահանման կառուցվածքի փոփոխությունները ժամանակագրորեն տեղի են ունեցել հիմնականում երկամյա և եռամյա պարբերականությամբ, որից ելնելով էլ կարելի է առանձնացել արտահանման ցուցանիշների փոփոխության համապատասխան ենթափուլերը, իսկ դրանց միավորմամբ էլ կարելի է դուրս բերել արտահանման կառուցվածքի փոփոխության հիմնական փուլերը ՀՀ-ում:

Այսպես, գծապատկեր 2-ից ելնելով, կարելի է առանձնացնել հետևյալ կլաստերները՝

- ✓ կլաստեր 1. մինչև 2004թ.,
- ✓ կլաստեր 2. 2005-2009թթ.,
- ✓ կլաստեր 3. 2010թ-ից սկսած:

Հատկանշական է, որ նախաճգնաժամային շրջանում դիտարկվող ենթափուլերն ունեցել են եռամյա պարբերականություն, իսկ ճգնաժամային և հետճգնաժամային առաջին տարիներին արտահանման դինամիկայում փոփոխությունները գրանցվել են երկամյա (2005-2006թթ., 2007-2008թթ.) և նույնիսկ 1 տարվա պարբերականությամբ (2009թ., 2010թ.): Մինչդեռ վերջին տարիների ընթացքում նկատելի է հակառակ միտումը՝ երկամյա պարբերաշրջանը (2011-2012թթ.) փոխարինվում է եռամյա պարբերաշրջանով (2013-2015թթ.), ինչն արտահանման կառուցվածքում մինչճգնաժամային հատվածին բնորոշ հարաբերական կայունության վերահաստատման վկայություն կարելի է համարել:

Ներմուծման կառուցվածքում գերակշռում է հանքահումքային արտադրանքը, որի մասնաբաժինը 2016թ. կազմել է շուրջ 18% (591 մլն ԱՄՆ դոլլար) և վերջին մեկուկես տասնամյակում աննշան նվազում է արձանագրել: Ներմուծման երկրորդ խոշորագույն հոդվածը «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախումբն է. 2016թ.՝ 471 մլն ԱՄՆ դոլլար, որին հաջորդում է պատրաստի սննդի արտադրանքի ներմուծումը՝ 332 մլն ԱՄՆ դոլլար:

Հատկանշական է, որ ՀՀ-ում ըստ ապրանքային բաժինների ներմուծման համակենտրոնացման մակարդակն ավելի ցածր է, քան արտահանմանը: Այսպես, երեք խոշորագույն ապրանքային բաժինների գումարային տեսակարար կշիռը ներմուծման

⁵ Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:


⁶ Крыштановский А.О., Анализ социологических данных с помощью пакета SPSS. – М.: Издательский дом ГУ ВШЭ, 2006, 281 с.

ընդհանուր կառուցվածքում կազմում է 42.3%, իսկ հինգ խոշորագույններին բաժին է ընկնում ընդհանուրի շուրջ 60%-ը: Պետք է նկատել, որ սույն ցուցանիշները հետձգվածամային շրջանում նվազման միտումներ են ցուցաբերել, ինչը ներմուծման ապրանքային բազմազանեցման խորացման ազդակ (չնայած և՛ թույլ) կարելի է համարել:

Նկատենք, որ ըստ մեր հաշվարկների, ներմուծման ապրանքային կառուցվածքի համակենտրոնացման մակարդակի և ՀՆԱ մեծության միջև բացասական փոխկապվածություն (կորելյացվածություն) ավելի ընդգծված բնույթ ունի, քան արտահանման պարագայում (տես՝ աղյուսակ 4):

Գծապատկեր 2.

Արտահանման ցուցանիշների կլաստերացումն ըստ տարիների (աստիճանակարգային կլաստերացման դեղորդումը)⁷



Աղյուսակ 4.

ՀՀ ներմուծման ապրանքային կառուցվածքի համակենտրոնացման աստիճանի և ՀՆԱ փոխկապվածությունը. գծային կորելյացիայի գործակիցները⁸

Ներմուծման համակենտրոնացման աստիճանի գնահատականը	ՀՆԱ-ի հետ գծային կորելյացիայի գործակիցը
Երեք խոշորագույնների մասնաբաժինը	-0,652
Հինգ խոշորագույնների մասնաբաժինը	-0,823
Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը	-0,766

Այսպես, ըստ երեք խոշորագույն ապրանքախմբերի ներմուծման համակենտրոնացման մակարդակի և ՀՆԱ-ի միջև գույգային կորելյացիայի գործակիցը կազմում է -0.652, իսկ հինգ ապրանքախմբերի պարագայում նույն ցուցանիշը բացարձակ մեծությամբ ավելի բարձր է՝ -0.823: Հարկ է նշել, որ արտահանման դեպքում հաշվարկված նույն ցուցանիշները վկայում էին գծային կապի բացակայության փաստը: Այսինքն՝ արտահանման համակենտրոնացումը ՀՆԱ աճը զսպող էական գործոն է հանդիսանում, ընդ որում, ՀՆԱ ընդլայնումը շատ ավելի զգայուն է ներմուծման, քան արտահանման համակենտրոնացման նկատմամբ:

Ընդհանուր առմամբ, վերլուծելով ՀՀ արտաքին առևտրի ցուցանիշները, կարելի է եզրակացնել, որ վերջին տարիներին արձանագրված որոշակի բարենպաստ միտումները խիստ թույլ են արտահայտված և հնարավորություն չեն տվել էականորեն բարելավել ՀՀ արտաքին առևտրի կառուցվածքը: Այն շարունակում է մնալ գերկենտրոնացված, ընդ որում՝ արտահանման և ներմուծման միջև համակենտրոնացման խորացումը ՀՆԱ աճը զսպող էական գործոն է հանդիսանում, այսինքն՝ արտահանումը կախված է հանքահումքային, մետաղամշակման և սննդարդյունաբերության ոլորտի արտադրանքից: Իրականացված գործնական վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ 2007թ. տեղի է ունեցել ՀՀ արտահանման մոդելի խոշոր փոփոխություն, իսկ ավելի փոքր փոփոխությունները, ըստ կլաստերային վերլուծության արդյունքների, կանոնավոր կերպով արձանագրվել են երկամյա և եռամյա պարբերականությամբ:

ՀՀ արտաքին առևտրում առկա կառուցվածքային անհամամասնությունները, դիվերսիֆիկացիայի ցածր մակարդակն ու այլ կարեւորագույն խնդիրները, մեր մոտեցմամբ, պայմանավորված են մի շարք պատճառներով, որոնց շարքում առվել առաջնային են համաշխարհային տնտեսության արդի իրողություններին ոչ համարժեք արտաքին տնտեսական քաղաքականությունը, արտաքին աշխարհի հետ ՀՀ հաղորդակցության ուղիների սահմանափակությունն ու ենթակառուցվածքային թերզարգացածությունը, ներքին շուկայում առկա մրցակցային խնդիրները, տնտեսության արհեստական մենաշնորհացումն ու ներմուծման գործառնություններում ոչ ֆորմալ սահմանափակումների կիրառումը, հանքահումքային արտադրանքի համաշխարհային նպաստավոր գնային կոնյունկտուրայով պայմանավորված ՀՀ տնտեսության հանքահումքային հատվածի առաջնացիլ զարգացումը, տնտեսության այլ հատվածներից ներդրումների

⁷ Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

⁸ Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

արտահոսքը՝ հոգուտ բնական ռեսուրսների էքստենսիվ շահագործում նախատեսող նախագծերի, Նորարարական նախագծերում ներդրումների իրականացման անբավարար խթանները, Նորարարական գաղափարների կենսագործման ինստիտուցիոնալ համակարգի թերզարգացածությունը, հայրենական ապրանքների և ծառայությունների՝ միջազգային շուկաներում առաջնության միջոցառումների անբավարար արդյունավետությունը, այս ոլորտում պետական-մասնավոր գործընկերության գրեթե բացակայությունը և այլն:

Ընդհանուր առմամբ, ՀՀ արտաքին առևտրի տվյալների վերլուծությունը վկայում է որ հայաստանյան տնտեսության միջազգային մրցունակության ցածր մակարդակը պայմանավորում է արտաքին ապրանքային շուկաներում ՀՀ պոտենցիալ մրցակցային առավելությունների օգտագործման ոչ բավարար արդյունավետությունը:

*Ներկայացվել է 09.08.2017թ.
Ընդունվել է տպագրության 31.08.2017թ.*